

ԷԼՊԻՍ ԿԵՍԱՐԱՑՅԱՆԸ ԵՎ «ԿԻԹԱՌ» ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱԻՐԱ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ* 

ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտ

Սույն ուսումնասիրությունը յուրօրինակ գրականագիտական հետաքննություն է, որի շրջանակներում պարզաբանվել են մի շարք ուշագրավ հարցեր՝ ի՞նչ առաքելություն էր ստանձնել 19-րդ դարի երկրորդ կեսին ապրած և ստեղծագործած առաջին հայուհի խմբագիր, լրագրող, գրող-հրապարակախոս Էլպիս Կեսարացյանը (1830-1913), ի՞նչ պայմաններում էր նա իր գրական-մշակութային և սոցիալ-հասարակական գործունեությունը ծավալում, ի՞նչ մարտահրավերների էր հանդիպում այդ ընթացքում:

Հետաքննական, կենսագրական, համեմատական և այլ վերլուծությունների միջոցով բացահայտվել են Էլպիս Կեսարացյանի կատարած այն բազմաթիվ դերերը՝ կին-խմբագիր, կին-հրապարակախոս, կին-հրատարակիչ, կին-գրքի հեղինակ, կին-թարգմանիչ, կին-մայրապետ, կին-ուսուցիչ, որոնք նա կարողացել է իրացնել ապրելով օսմանյան կայսրապետության բռնաճնշումների և գրաքննության պայմաններում: Էլպիս Կեսարացյանի գործունեության ու երկերի ուսումնասիրությամբ հիմնավորվում է այն գաղափարը, որ հեղինակի գերնպատակը *սոցիումի կատարելագործումն էր*:

Ուսումնասիրությունը կատարվել է՝ հաշվի առնելով 19-րդ դարի երկրորդ կեսին Կ. Պոլսում առկա աշխարհաքաղաքական և պատմական համատեքստերը, կայսրապետական գրաքննության առկայությունը, Կեսարացյանի խմբագրած «Կիթառ» հանդեսի վերաբերյալ շրջանառված քննադատությունները, ընդգծվել է այն անկոտրում կամքը, որով ամբողջ կյանքում առաջնորդվել է առաջադեմ կին գործիչը՝ որպես քրիստոնյա ազգային փոքրամասնության ներկայացուցիչ:

Բանալի բառեր - Էլպիս Կեսարացյան, «Կիթառ», առաջին հայ կին խմբագիր, Օսմանյան կայսրություն, 19-րդ դար

Աշխատանքն իրականացվել է ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի աջակցությամբ՝ թիվ 24SSAH-6B006 հետազոտական նախագծի շրջանակներում:

* **Նաիրա Համբարձումյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ Մանուկ Արեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող

Наира Амбарцумян – кандидат филологических наук, доцент, старший научный сотрудник Института литературы имени Манука Абегамяна НАН РА

Naira Hambardzumyan – PhD in Philology, Associate Professor, Senior Researcher, Institute of Literature named after Manuk Abeghyan, NAS of the RA

Էլ. փոստ՝ nairahambardzumyan@yahoo.com <https://orcid.org/0000-0002-2792-8891>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 23.12.2024

Գրախոսվել է՝ 04.03.2025

Հաստատվել է՝ 07.03.2025

© The Author(s) 2025

Ներածություն

1839 թվականին «Թանգիմաթի»^{*} առաջին փուլի՝ «Գյուլիսանեի Հաթթը Շերիֆի» հոշակումից հետո թուրքական կառավարությունը պարտավորվել էր Օսմանյան կայսրությունում ապրող ազգերին տալ սոցիալ-հասարակական և քաղաքական արտոնություններ, որոնք հատկանշվում էին բարենորոգությունների տիրույթում: Ի տարբերություն մինչ այդ եղած բարեփոխումների՝ «Թանգիմաթում» տեղ էին գտել ոչ միայն ռազմական, այլև տնտեսական, քաղաքական, օրենսդրական, սոցիալ-մշակութային, կրթական, կրոնական և ազգային խնդիրներին վերաբերող հարցեր^{**}: Ըստ այդմ՝ սուլթանական կառավարությունը սկսել էր սոցիալական, հասարակական, քաղաքական և տնտեսական կեղծ քաղաքականություն վարել, իրականացնել կեղծ փոփոխություններ: Դրանք մի կողմից թվացյալորեն հատկանշում էին նախաձեռնվող բարեփոխումները, մյուս կողմից վերահսկվում էին թուրքական կառավարությունից, ենթարկվում էին գրաքննության և հիմնականում չէին իրագործվում:

«*Մոստումնայից բարեփոխումների*» հեռանկարով տարված՝ Օսմանյան կայսրության խոշոր քաղաքներում, մասնավորապես Կ. Պոլսում, հայերը սկսեցին հիմնել դպրոցներ, վարժարաններ, ամսագրեր, թերթեր, հրատարակչատներ, կրթական, ազգային բարեգործական միություններ, հասարակական ընկերություններ, առևտրական կազմակերպություններ և այլն: Նրանք փորձում էին խթանել հայ հասարակական-քաղաքական միտքը, հրապարակախոսությունը, հրատարակչական գործը, մշակույթը, հոսանքները, սոցիալ-տնտեսական կապերն ու հարաբերությունները:

Եվրոպական երկրներում կրթված և եվրոպական ազգային-ազատագրական շարժումներով ու արժեքներով տարված արևմտահայ երիտասարդ մտավորականները Կ. Պոլսում և հարակից քաղաքներում սկսեցին տարածել եվրոպական լուսավորական ու ազատասիրական գաղափարները, իսկ 1850-1860-ական թվականներին նախաձեռնեցին նաև հայոց ազգային սահմանադրական շարժումը և դարձան առաջին սահմանադրության հեղինակներն ու ստեղծողները [8; 9: 24]:

1850-1860-ական թվականներին Օսմանյան կայսրությունում տպագրված մամուլի առիթով ակադեմիկոս Ալբերտ Խառատյանը գրում է. «Կոդմնակի վերահսկողության ենթարկվելով գրատպության օրենքի (1857) շրջանակներում,

* «Թանգիմաթ» - օսմաներեն՝ բարեփոխումների (ռեֆորմների) օրենսգիրք, որի հիմնական սկզբունքները շարադրվել և հրապարակվել են 1839 թվականին «Գյուլիսանեի Հաթթը Շերիֆի» և 1856 թվականի «Հաթթը Հումայուն» հրովարտակներում, որոնք նախատեսում էին բարեփոխումներ, սակայն հիմնականում չեն իրագործվել: «Թանգիմաթը» Օսմանյան կայսրությունում իրականացվել է 1839-1876 թվականներին, որին զուգահեռ՝ 1876 թվականին ընդունվել է նաև կայսրության առաջին սահմանադրությունը:

** Նախաձեռնությունը գլխավորում էր թուրք բյուրոկրատիայի կրթված խումբը՝ Մուստաֆա Ռեշիդ փաշայի գլխավորությամբ, ով հետագայում դարձավ Գյուլիսանեի Հաթթը և Շերիֆը (խաչ և սրբազան հրաման):

Թուրքիայում թերթերն ու ամսագրերը իրավական կանոնարկման առանձին բնագավառ դարձան այն ժամանակից, երբ հրապարակվեց մամուլի մասին օրենքը (1864 թ.): <...> Գրաքննությունը որակական փոփոխություններ ապրեց 1860-1870-ական թվականներին, երբ ավելի սրվեցին հակասությունները մի կողմից հպատակ ժողովուրդների և բռնակալության, մյուս կողմից՝ կայսրությանը սպառնացող տերությունների միջև» [14: 4-5]:

Դեռևս 1840-1850-ական թվականներից Օսմանյան կայսրությունում, մամուլի զարգացման սկզբնավորումից սկսած, թուրքական վարչական իշխանությունները լրտեսում և դատաստան էին տեսնում ենթարկեցման չափանիշները չապահովող կասկածելի պարբերականների նկատմամբ: Գրաքննության ճգնաժամը ահռելի մեքենայի ազդեցությունից անմասն չէին նաև հայ մտավորական կանայք: Կարևոր է նշել, որ նույնիսկ 1864 թվականի մամուլի օրենքը, չնայած իրավական կարգավորումներին, չկարողացավ փոխել ավանդաբար շարունակվող այդ իրավիճակը, և օրենքի հրապարակումից երկու տարի անց մամուլը նորից հայտնվեց գրաքննության՝ ոչնչով չկարգավորված իրավունքների ոլորտում:

Գրաքննության ճգնաժամը ահռելի մեքենայի ազդեցությունից անմասն չէին նաև հայ մտավորական կանայք: Եվ դրա պարզ օրինակը Էլպիս Կեսարացյանի գործունեությունն է:

Էլպիս Կեսարացյանը և «Կիթառ» հանդեսը

Էլպիս Կեսարացյանի կյանքը հատկանշական է կանանց հիմնախնդիրները ու կարողությունները և նրանց վերաբերող ռազմավարությունները սոցիալ-մշակութային, հասարակական-քաղաքական և պատմական համատեքստում ուսումնասիրելու առումով: Էլպիս Կեսարացյանը (Տողրամաճյան) ծնվել է 1830 թվականին, Կ. Պոլսի Պեշիկթաշ թաղամասում: Նա առաջին հայուհի խմբագիրն է, գրողը, լրագրող-հրապարակախոսը և ֆեմինիստուհին, իսկ նրա հիմնադրած ու խմբագրած «Կիթառը»՝ առաջին ֆեմինիստական հանդեսը Կ. Պոլսում: Կրթությունը ստացել է նախ Օրթագյուղի, ապա Պեշիկթաշի Տատյանների հայկական դպրոցում (Օսմանյան կայսրություն):

Էլպիս Կեսարացյանի՝ ընտանիք ունենալու մասին տեղեկություններ չեն պահպանվել, քանի որ գրաքննության հետևանքով բռնագրավվել է նրա ողջ արխիվը: Պահպանվել են միայն խմբագրուհու գրական-մշակութային և սոցիալ-հասարակական գործունեությունը լուսաբանող որոշ տեղեկություններ: Նշենք, որ Էլպիսի ազգանունը բաղկացած է երկու բաղադրիչներից՝ *Տողրամաճյան-Կեսարացյան*. առաջին բաղադրիչը նշանակում է *հյուսն* (ատաղձագործ), իսկ երկրորդը ծագել է Կեսարիա [10: 55] արմատից, և ժամանակակիցները խմբագրուհու ազգանվան ծագումնաբանությունը [3: 390-391] բացատրում են նրա հոր՝ ծնունդով կեսարացի լինելու փաստով:

Փաստավավերագրական նյութերի ուսումնասիրությունից պարզվել է, որ մամուլում տպագրված հոդվածների և քննադատությունների հեղինակները խմբագրուհուն հիշատակել են «Օրհորդ Կեսարացյան» ձևով, որն էլ իր հերթին է հիմք տալիս ենթադրելու, որ նա ամուսնացած չի եղել: Մամուլից տեղեկանում ենք նաև, որ Կեսարացյանը եղել է արձակագիր Տիգրան Կամսարականի մորաքույրը:

Էլպիս Կեսարացյանը 1872 թվականից *ուսուցչուհի* է աշխատել Կ. Պոլսի Մաքրուհյաց վարժարանում: Կյանքի մեծ մասը ապրել է Կ. Պոլսում, որտեղ և 1861-1863 թվականներին *հիմնադրել, խմբագրել* և *հրատարակել* է «Կիթառ» հանդեսը: Իսկ «Կիթառ»-ի փակվելուց հետո, երբ Կեսարացյանը հեռացել էր սոցիոմից, մի որոշ ժամանակով (անհայտ է՝ ինչո՞ւ և ե՞րբ) ապրել է Տիգրան Կամսարականի տանը, Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում: Կեսարացյանը եղել է նաև Կ. Պոլսում գործող «Պարզասեր հայուհեաց ընկերութեան» [18; 19: 61-70] հիմնադիր-անդամներից մեկը: Կյանքի վերջին տարիներին *մայրապետ* է աշխատել Կ. Պոլսի «Մուրբ Խաչ» հիվանդանոցում: Էլպիս Կեսարացյանը մահացել է 1913 թվականին, 83 տարեկանում, Գատը գյուղում: Կենսագրական այլ տեղեկություններ ուղղակի պահպանված չեն բոլոր այն գրական փաստաթղթերում, որոնք ուսումնասիրվել են:

Կեսարացյանը *առաջադեմ մտավորական* էր: Նա պայքարում էր, որպեսզի բռնապետական կայսրությունում հայ հասարակությունը բարենորոգվի, զարգանա, և հայ կանայք դառնան այդ բարենորոգված հասարակության լիիրավ անդամները: Ակտիվորեն մասնակցում էր Կ. Պոլսի մշակութային կյանքին՝ իր հրապարակախոսության և էսսեների միջոցով բարձրացնելով կանանց սոցիալ-իրավական հիմնախնդիրները:

Կեսարացյանը նաև *նախաձեռնող* կին էր: 1861 թվականին նա հիմնադրել, 1862-1863 թվականներին խմբագրել և տպագրել է «Կիթառ» ամսօրյա հանդեսը՝ որպես կանանց ձայնի բարձրախոս (7 համար, ընդի. 56 էջ):

«Կիթառ»-ը հայ կանանց իրավունքները բարձրաձայնող առաջին տպագիր հանդեսն էր Օսմանյան կայսրությունում:

Հանդեսի առաջին համարը տպագրվել է 1862 թվականի օգոստոսի 1-ին, Կ. Պոլսում: «Կիթառ»-ի առաջին համարը բացվում է ընթերցողներին ուղղված ուղերձով, որում խմբագիրը նշում է, որ տպագրելու է կանանց հիմնախնդիրներին առնչվող նյութեր, և որ «Կիթառ»-ը հասցեագրված է և ծառայելու է միայն կանանց իրավունքների պաշտպանությանը: Ուղերձում առավելապես շեշտվում է կանանց զարգացնելու և դրանով նաև ազգի զարգացմանը նպաստելու հիմնախնդիրները:

Հանդեսի *նպատակը* կանանց ազատագրության՝ կրթության, դաստիարակության, խոսքի և ձայնի իրավունքների, բարեվարքության, կին-տղամարդ իրավունքների և հավասարության հիմնախնդիրները բարձրաձայնելն ու դրանց իրացմանը նպաստելն էր. «...Կիթառը իւր մեղմ եղանակաւ պիտի հնչէ

ուսումնասեր Տիկնանց և Օրիորդաց փափուկ զգացմանց Ազգասիրութեան և ուսման սերը, կրթութիւն, քաղաքավարութիւն, և համարձակութիւն հանդերձ պարկեշտութեամբ, արթնութիւն շահաւոր գործերու մէջ, և ժրութեամբ փոյթ ունենալ օրիորդաց անշուք վիճակը կրթութեան գեղեցիկ ձիրքերով բարեգարդելու» [4: 2]:

«Կիթառ»-ի չափսերը համապատասխանում են արդի տպագրության A4 ձևաթղթի չափսերին: Հետագայում արդեն կին խմբագիրները, տպագրական որոշ խնդիրներ լուծելով, փոխեցին այդ ձևաչափը (տե՛ս Սրբուհի Երիցեանց, «Տումար ընտանեկան» (1874, Թիֆլիս), Մառի Պեյլերեան, «Արտեմիս» (1901), Հայկանուշ Մառք, «Ծաղիկ» (1906, Կ. Պոլիս) են): Որպես նորույթ և նորարարական առաջին ազդակ՝ «Կիթառը» մեծ և լուրջ երևույթ էր ոչ միայն օսմանյան բռնապետության մէջ ապրող հայ մտավորականների, այլև սուլթանական գրաքննության համար, աշխարհում առաջին հայալեզու հանդեսն էր «կանանց մասին և կանանց համար»՝ «Հրաւեր հայկազն օրիորդաց» նշանաբանով: Սույնով պայմանավորվում և կարևորվում են նաև հանդեսի գրապատմական, փաստաթղթային և գաղափարաբովանդակային արժեքները:

Ի՞նչը ստիպեց Կեսարացյանին հիմնել «Կիթառ» հանդեսը հայրիշխանական միջավայրում, տպագրել իր էսսեները և կարողանալ գոյատևել տղամարդկանց կողմից խմբագրվող և տպագրվող պարբերականների հետ մրցակցության մէջ: «Կիթառ»-ում տպագրված նրա էսսեները առավելապես ինտելեկտուալ բնույթ ունեն, և դրանցում լավ բնորոշելի ու տարբերակելի են մտածող կնոջ մտահոգությունները ազգի ճակատագրի, կանանց հիմնախնդիրների, սեռերի միջև իրավունքների և հավասարությունների օրինականացման մասին: Կեսարացյանի էսսեները, որոնք միաժամանակ նրա հրապարակախոսության նմուշներն են, միտված են վերոնշյալ հարցերի լուծման ճանապարհներ որոնելուն և ելքեր գտնելուն: Եվ հեղինակը փորձել է դրանք ձևակերպել յուրովի:

Ուսումնասիրությունը կատարվել է Կեսարացյանի կենսագրությանը և «Կիթառ»-ին առնչվող աղբյուրների ու տեղեկությունների հետաքննական և համեմատական վերլուծությունների և դրանց տեսականացման ճանապարհով [25: 7-24]: Փորձ է արվել լույս սփռելու, թե ինչ աղբյուրներից են Կեսարացյանի էսսեներ ներթափանցել եվրոպական առաջադեմ գաղափարները, թեպետ խմբագրուհու կենսագրության մէջ առեղծվածային դրվագները և անհայտ խորշերը շատ են, ինչը նաև գայթակղիչ է: Ուսումնասիրությունը ընթացավորվել է հիմք ընդունելով նյութի առանցքը կազմող երեք կարևոր հանգամանքները՝

ա. աշխարհաքաղաքական և պատմական համատեքստերը,

բ. 19-րդ դարի երկրորդ կեսի իրադարձությունների դիտարկումը արդիության մէջ,

գ. կանանց հիմնախնդիրների վերլուծության միջոցով կին-տղամարդ հարաբերությունների հայրիշխանական շերտի բացահայտումը [29]:

Կեսարացյանի մշակութային կողմնորոշումը ամբողջովին ձևավորվել է հայկական միջավայրում, թեպետ նրա էսսեներում զգացվում է նաև արևմտաեվրոպական՝ անգլիական, գերմանական և ֆրանսիական մշակույթների ներկայությունը: Ռուսական մշակույթի հետքեր չկան: Ուշագրավն այն է, որ խմբագրուհին ապրել և գործել է Օսմանյան կայսրությունում, սակայն նրա էսսեներում թուրքական ազդեցության հետք նույնպես չկա:

Ինչ վերաբերում է «Կիթառ»-ի հրատարակության վայրին, ապա 19-րդ դարում Օսմանյան կայսրությունում տպագրված հայկական մամուլի մեծ մասը, այդ թվում՝ «Կիթառ»-ը, տպագրվում էր Կ. Պոլսում, որը, որպես մայրաքաղաք, դեպի իրեն էր ձգում տվյալ ժամանակաշրջանի առավել զարգացած մտավորականներին:

Կեսարացյանի էսսեների թեմաներն ու ոճը որոշ առումով արտացոլում են լուսավորական շարժումը (*գարթոնքի շարժում*), իդեալները, հեղափոխական գաղափարները: Նշենք, որ ժամանակի հայրիշխանական ընկալումների և բարքերի պատճառով, ինչպես նաև սուլթանական գրաքննությունից խուսափելու նպատակով «Կիթառ» հանդեսի բոլոր յոթ համարներում Կեսարացյանը իր հոդվածները ստորագրել է «Ե.Կ.Տ. Հայկուհի» կամ «Ե.Կ.Տ. Հայուհի» կեղծանուններով: Այս մասին հավաստիանում ենք հանդեսի համարները թերթելիս:

Այդ առիթով 1906 թվականին բանասեր, հրապարակախոս Հրանտ Ասատուրը գրում է. «Օրիորդ Ելպիս Կեսարացեան իբր խմբագրուհի կը ստորագրէ Ե.Կ.Տ. Հայկուհի: Կ'երենայ թէ ժամանակին համար իր ձեռնարկը անսովոր կը նկատէ, հետեւաբար Օրիորդը չի համարձակիր իր բոլոր անունով հրապարակել» [3: 389]:

Վիեննայի Մխիթարյան միաբանության հայր Եփրեմ վարդապետ Պողոսյանը Կեսարացյանի կեղծանվան գլխատառերի նշանակությունը բացատրում է հետևյալ կերպ՝ ««Կիթառ»ի խմբագրուհիին Ե.Կ.Տ. սկզբնատառերը նշանակած են Ե.Տ.Կ. Ելպիս Տողրամաճի Կարապետեան» [21: 11], և հղում է 19-րդ դարի երկրորդ կեսին Կ. Պոլսում տպագրվող մի հանդեսի [7: 16]:

Անհրաժեշտ է նկատել, որ 1879 թվականին Ելպիս Կեսարացյանը իր «Նամականի առ ընթերցասեր հայուհիս» [16] հոդվածների, նամակների և բանաստեղծությունների ժողովածուն հրատարակել է *Էլպիս Կեսարացյան* անունով, հետևաբար՝ հակված ենք կարծելու, թե խմբագրուհին գրաքննությունից խուսափելու նպատակով է «Կիթառ»-ում և այլ պարբերականներում, մասնավորապես «Մասիս» հանդեսում, իր աշխատանքները ստորագրել «Ե.Կ.Տ. Հայկուհի» կամ «Ե.Կ.Տ. Հայուհի», ինչը առավել հավանական ու տրամաբանական է:

Հայ մամուլի տպագրությանը առնչվող տարբեր աղբյուրներից, այդ թվում նաև Վիեննայի Մխիթարյան միաբանության հայր Գրիգորիս Գյալեմքյարյանի կազմած «Պատմութիւն հայ լրագրութեան» [11] Ա և Բ հատորներից հավաստիանում ենք, որ հայ (մշակույթի) պատմության ընթացքում, սկսած 1790-ական թվականներից, տարբեր ուղղվածություն և բնույթ ունեցող բազմաթիվ

հայկական պարբերականներ («Ազդարար», 1794) են տպագրվել (իհարկե, ոչ կանանց համար), և դրանց խմբագիրները ու հիմնադիրները եղել են տղամարդիկ: Այնպես որ, կանանց հիմնախնդիրները լուսաբանող հանդես հիմնադրելու, խմբագրելու և տպագրելու գաղափարի հեղինակային իրավունքը պատկանում է Էլպիս Կեսարացյանին: Դրանով, իհարկե, Կեսարացյանը խախտել է տղամարդկանց կողմից իրացվող և նրանց բնորոշ գործունեության սահմանները և փաստացի զբաղվել է տղամարդու աշխատանքով:

Դատելով մամուլում առկա արձագանքներից՝ «Կիթառ»-ը լայն ճանաչում և շատ ընթերցողներ է ունեցել, սակայն 19-րդ դարի երկրորդ կեսին ստեղծված պատմական, քաղաքական, սոցիալական և մշակութային հանգամանքները նպաստել են, որ հանդեսը երկար կյանք չունենա:

«Կիթառ»-ը որպես հայ կանանց առաջին ձայն Օսմանյան կայսրությունում

Էլպիս Կեսարացյանը «Կիթառ»-ը հասցեագրում էր բոլոր ընթերցասեր հայուհիներին և ընդհանրապես աշխարհի բոլոր կանանց: Դրանով նա ձեռք էր բերում բազմաթիվ հետևորդներ: «Կիթառ»-ի առաջին համարը ունի որոշակի գեղարվեստականություն, թեև բնույթով մենախոսական էր: Այս համարում առաջին կին խմբագրուհին տպագրել է միայն իր էսսեները և բանաստեղծությունները, որոնք ուղղված են կանանց իրավունքների պաշտպանությանը: Նրանից առաջ այդ մենաշնորհը ևս պատկանում էր տղամարդկանց: Հրապարակախոսական էսսեներ տպագրելով «Կիթառ»-ում և այլ հանդեսներում՝ նա կարծես իր անհատական ձայնը (personal voice) հասցնում էր աշխարհի կանանց և հավատում էր, որ իր ձայնը ի գործ է միավորել այդ կանանց ձայները, և ինչ-որ մի օր վերածվել բազմաձայնության:

Թարգմանության հարցը: «Կիթառ»-ի երկրորդ համարից խմբագիրը ընդգրկել է նաև տարբեր հեղինակների աշխատանքները (անդրադարձներ, բանաստեղծություններ, նամակներ, թևավոր և իմաստասիրական մտքեր): Էլպիս Կեսարացյանին որպես թարգմանիչ ներկայացնելու որևէ հավակնություն չունենք, սակայն հանուն արդարության անհրաժեշտ է նշել, որ յոթերորդ համարում տպագրել է Ֆ. Շիլլերի «Օդեանի կույսը» պիեսից մեկ հատված՝ Յոհաննային խարույկ բարձրացնելու տեսարանը՝ «Յովհաննա փայտակոյտին մեջ» [4: 53-55] խորագրով, որին կցել է նաև փոքրիկ առաջաբան: Ուշագրավ է, որ Շիլլերի պիեսի խորագիրը Կեսարացյանը թարգմանել է «Օդեանի օրիորդը» տարբերակով:

Դատելով Կեսարացյանի ապրած միջավայրից և թարգմանության բնագրային լեզվից՝ կարող ենք ենթադրել, որ նա տիրապետում էր առնվազն երեք լեզվի՝ հայերեն, թուրքերեն, անգլերեն կամ գերմաներեն: Իսկ եթե հաշվի առնենք նաև Ալեքսանդրիայում ապրած տարիները, որոնց մասին արևմտահայ գրագետ Թեոդիկը գրում է՝ «Կը բնակի հիմայ Ադեքսանդրիա՝ քեռորդոյն Տ. Կամսարականի հետ» [12: 268], ուրեմն կարող ենք ենթադրել, թե հեղինակը տիրա-

պետել է նաև արաբերենին: Սա կանանց ձայնը հասանելի դարձնելու մեկ այլ հնարավորություն էր, որը օգտագործում էր Էլլայիս Կեսարացյանը: Ինչպես Marie Nedregotten Sørbo-ն է գրում նորվեգացի հայտնի խմբագրուհու՝ Բրիգիտ Քյոլնի առիթով՝ նա գործածում էր “another male mask” [26: 101-114]: Իմ կարծիքով, Կեսարացյանը նույնպես կատարել է տղամարդու աշխատանք՝ կրելով տղամարդու դիմակ:

Իհարկե, փաստեր չկան այն մասին՝ արդյոք Կեսարացյանն է թարգմանել «Օռլեանի Կույսը», թե՛ ոչ: Սակայն, կարծում եմ, խելամիտ է պատճառի ու հետևանքի համադրությամբ կազմվող հետևյալ վարկածը, որի միջոցով ամբողջանում է պատկերը: Եթե «Կիթառ»-ը փակվելու պատճառներից մեկը անբավարար միջոցներն էին, ինչպես նշում են ժամանակակիցները, ուրեմն խմբագրուհին հնարավորություն չէր ունենա նաև հատուկ թարգմանիչ վարձելու և վճարելու տվյալ ծառայության համար: Հետևաբար, հակված ենք մտածելու, որ խմբագրուհին ինքն է 1863 թվականին թարգմանել «Կիթառ»-ի տվյալ նյութը: Եվ եթե ուշադրություն դարձնենք, ապա թարգմանության համար ընտրված հատվածը ևս առնչվում է կանանց հիմնախնդրին, ինչպես նաև վկայում է խմբագրուհու բարձր ճաշակի և համաշխարհային գրականությանը քաջատեղյակ լինելու մասին:

Մեկ այլ ուշագրավ փաստ. 7-րդ համարում Կեսարացյանը տպագրել է «Բարոյավեպ» խորագրով մի էսսե, որը «Կիթառ»-ի փակման պատճառով կիսատ է մնացել: Ժանրային առանձնահատկություններով այն չի զիջում 19-րդ դարում գրված այդօրինակ աշխատանքներին: Եթե նյութի տակ ստորագրված չլինեք «Ե.Կ.Տ. Հայուհի», ապա կարելի էր մտածել, թե նույնպես թարգմանություն է: Նշենք նաև, որ Կեսարացյանը իր անուն-ազգանունը հանդեսի շապիկին չի գրել, այլ հանդեսի վերջում գրել է միայն իր կեղծանունը՝ «Տնօրեն-խմբագրուհի՝ Ե.Կ.Տ. Հայկուհի (կամ Ե.Կ.Տ. Հայուհի)», և ստորագրել է միմիայն իր գրած նյութերի տակ: Հանդեսի վերջում գրվել է նաև հրատարակչատուն-տպարանի անունը՝ «Ռ. Յ. Քիուրքճեան», և հրատարակման վայրը՝ «Կոստանդնուպոլիս, Ֆինճանճըլար»: Հանդեսի շապիկին գրվել է՝ «Կիթառ, Հանդես ամսօրեայ, Հրաւեր հայկազն օրիորդաց», հրատարակման տարին, ամիսը, օրը, արժեքը, տպագրատան հասցեն:

Անհրաժեշտ է հիշատակել, որ 19-րդ դարի երկրորդ կեսին սուլթանական կայսրապետությունում տպագրված պարբերականների և հանդեսների մեծ մասը երկար կյանք չունեք, քանի որ ենթարկվում էր *գրաքննության*, կամ *ֆինանսական անբավարար միջոցների* և *ներքին խարդավանքների* պատճառով փակվում էր: Այդ առումով «Կիթառ»-ը բացառություն չէ, քանի որ տպագրվել է ընդամենը յոթ համար: Տպագրության ընթացքը տևել է վեց ամիս՝ 1862 թվականի օգոստոսի 1-ից 1863 թվականի փետրվարի 15-ը: «Կիթառ»-ում տպագրված նյութերը առավելապես ինտելեկտուալ տիրույթում են, չկան առօրեական հարցեր քննող անդրադարձներ, օճառային զրույցներ, ծնունդների, հարսան-

յաց հանդեսների շնորհավորանքներ, նվիրատվությունների մասին լուրեր կամ մահվան բոթեր: Սակայն դրանից չի տուժել հանդեսի անմիջականությունը, քանի որ այն, ինչի մասին խոսում է հայ առաջին խմբագրուհին, վերաբերում է կանանց առաջադիմության, զարգացման, կրթության և դաստիարակության, բարեվարքության, կին-տղամարդ իրավահավասարության հիմնախնդիրներին, ինչպես նաև այդ կարող ներուժը ազգօգուտ աշխատանքների ծառայեցնելու հարցերին:

Նշենք, որ Կեսարացյանի համարձակ քայլերից հետո միայն Կ. Պոլսում կանայք սկսեցին ներգրավվել գրական-մշակութային տիրույթ, սակայն գրաքննության և հայրիշխանական սոցիումի չգրված տաբուների և բռնության գիյոտինը առաջինը իջավ հենց Կեսարացյանի վրա:

1863 թվականի փետրվարի 15-ին՝ յոթերորդ համարի տպագրությունից հետո, «Կիթառ»-ը փակվել է, այնուհետև Կեսարացյանը շուրջ 15 տարի մեկուսացել է գրական-մշակութային միջավայրից՝ աշխատակցելով միայն «Մասիս» հանդեսին: Փակման առիթով մամուլում շրջանառվում է միայն մեկ վարկած՝ *նյութական անբավարար միջոցները*: Սակայն, կարծում եմ, որ իրականում այդ վարկածը սոսկ արտաքին ծածկույթն է այն ամենի, ինչ տեղի է ունեցել:

Գոյություն են ունեցել առնվազն երկու հիմնական պատճառներ՝

1. *գրաքննությունը*, 2. *ներագգային* գրական և *ներքաղաքական* խարդավանքները, որոնց հետևանքով էլ ծագել է նյութական *անբավարար միջոցների* խնդիրը:

Ինչո՞ւ «Կիթառ», և ո՞րն էր հանդեսի նպատակն ու առաքելությունը

Այս հարցերին և ուղեկցող բազմաթիվ այլ տեսակետների էլլաիս Կեսարացյանը անդրադառնում է «Կիթառ» հանդեսի «Յառաջաբան»-ում և խմբագիր-ընթերցող երկխոսության համատեքստում տալիս է ազգասիրության, ազգօգուտ գործերին, հայ տիկնանց և դեռատի օրիորդներին հուզող, ինչպես նաև էթիկայի, բարոյականության, ճաշակի, վարվեցողության հիմնախնդիրներին առնչվող պատասխաններ: Նա առաջադրում է լուծումներ, կարևորում է նաև կրթության և դաստիարակության հիմնախնդիրները, որոնք բխում էին ժամանակի եվրոպական քաղաքակիրթ մոտեցումներից և ճաշակից. «..եթե Օրիորդք չունենան ուղիղ դաստիարակություն, եթե չունենան կարեւոր ուսմունք, եւ թէ մոլոր գաղափարները չուղղին ճշմարիտ գիտութեան կանոններով, պիտի չի կարենան ժամանակին յատկացեալ պաշտօնը յառաջ տանիլ, որով մարդը իւր նպատակին շահուց չի կարեր հասնի» [4: 12]: Որպես «Կիթառ»-ի հիմնադիր-տնօրեն և խմբագիր՝ Էլլաիս Կեսարացյանի հայացքն ուղղված էր Եվրոպա: Գրական, սոցիալ-հասարակական, կրթադաստիարակչական բնույթի էսսեններով և հոդվածներով հեղինակը փորձում էր ընթերցողներին պատկերացում տալ եվրոպական պատմական, քաղաքական, սոցիալական և մշակութային առաջադեմ փորձի մասին, ձգտում էր նպաստել արևմտահայության իգական սեռի քաղաքական հայացքների ձևավորմանը և գեղագիտական ճաշակի

բարձրացմանը: Դրանք, ճանաչողականից բացի, նաև կրթադաստիարակչական նշանակություն ունենին, հատկապես երիտասարդ սերնդի ստեղծագործողների, և առհասարակ, տարբեր տարիքների ընթերցողների համար:

Ինչո՞ւ «Կիթառ», և ո՞րն էր հանդեսի նպատակը ու առաքելությունը. այս հարցերին խմբագրուհին պատասխանում է «Յառաջաբանում» և բացատրում է «Կիթառ» հանդեսի տպագրության նպատակները. «Այսու դիտմամբ յանձն առած եմ այս ԿԻԹԱՌ անուն ամսաթերթին հրատարակման գործադիր լինիլ, որով ոչ թե մեր փանաքի գրիչը ՚ի հրապարակ հանել կը ցանկամք, այլ մեր սիրելի ընկերակցաց սրտից քաջալերությւն եւ խրախոյս տալ որ զօրանան ուսման եւ կրթութեան մեջ» [4: 2]: Կեսարացյանը տիկնանց և օրիորդներին ուղղորդում է դեպի ազգասիրության և հայրենասիրության կարևորագույն գաղափարները, տեղեկացնում է «ազգը յուզող խնդիրներու» և «բացուած բանավէճերուն» շուրջ կանանց տեսակետները և մտքերը հրապարակայնորեն արտահայտելու քաջության և իրավունքի մասին:

«Կիթառի» նպատակը և խնդիրը մտավոր բարձր ունակություններով կանանց և աղջիկներին համախմբելն էր, ինչպես նաև իգական սեռի ազատագրման՝ դաստիարակության, կրթության, խոսքի և ձայնի իրավունքների, հասարակության մեջ կնոջ դերի վերաբերյալ հարցերը բարձրացնելը. «Հանդիսիս նիւթերը պիտի ըլլան Օրիորդաց դաստիարակութիւն, բարոյական եւ բանասիրական յօդուածներ, Հայրենասիրութեան յորդորանք, Ազգային երգեր, պատմութիւն, ոտանաւորներ և առակներ» [4: 2]:

«Կիթառը» աշխատում էր կանանց շրջանում լուսավորչական, բարեգործական գործունեություն ծավալելու և ազգասիրական, իրավագիտակցական և ազատագրության գաղափարները տարածելու ուղղությամբ. «...Կիթառիս լարերը քաջ ներդաշնակութիւն չունենան այլ հայրենի եւ Ազգուն սէր հնչելու համար գուցէ ախորժելի ընծայի ընկերակցացս» [4: 2]: Կանանց հիմնախնդիրներին անդրադառնալով՝ Կեսարացյանը փորձում էր հանգուցալուծել կնոջ կախյալ վիճակը ընտանեկան միջավայրում և սոցիումում՝ կոչելով հայոց այրերին հնարավորություն տալ հայ տիկնանց կրթվելու, քանի որ «գոց են նոցա աչքերը», «ոտքերը՝ շղթայակալ» են, իսկ «շուրթերը՝ համր», իսկ հայ մայրերին հորդորում էր հավասար դաստիարակել տղաներին և աղջիկներին: Քանի որ, ըստ Կեսարացյանի, մեկը պայմանավորված է մյուսով՝ *տղետ* մայրը դաստիարակում է *տղետ* զավակներ, ինչի հետևանքով ձևավորվում է *տղետ* հասարակություն:

Ի տարբերություն արական սեռի շրջանակներում տարածված հայտնի կարծիքի և վերաբերմունքի, թե կինը սոսկ *զգայական* էակ է՝ Կեսարացյանը իգական սեռի մեջ տեսնում էր *բանական* անհատին, ով կարող է պայքարել, անցնել սուբյեկտիվացման (փիլիսոփայական իմաստով) ճանապարհով, դառնալ գրագետ ու կիրթ անհատ և ծառայել ազգին. «Շատ անգամ տեսած ենք, որ կին մը իւր այրէն աւելի խոհական, աւելի նախատես եւ աւելի տնտեսագէտ է, բայց ստիպեալ է կամաւ կուրօրէն իւր մովի այրին հնազանդելու. զի պէտք է

ըստ կոյր օրինաց՝ կինը լեզուահատ թոշուն ըլլայ, եւ այրը թեպետ ագռաւ՝ պէտք է ինքը կոչէ եւ խրոխտաբար իշխէ» [12: 129]: Հիմնավորապէս կարելի է պնդել, թէ հայ գրական մամուլի պատմության մեջ Էլպիս Կեսարացյանը առաջին կին խմբագիրն էր, հրատարակիչը, ֆեմինիստը և հեղափոխականը, ով հիմնադրեց ու տպագրեց *կանանց մասին և կանանց համար* հանդես: Նրա շնորհիվ «Կիթառը» տարբերվում էր 1860-ական թվականների և դրանից առաջ եղած այն բոլոր պարբերականներից, որոնց հեղինակները տղամարդիկ էին:

Թեև «Կիթառ» հանդեսի կյանքը կարճատև էր, սակայն այն իր նշանակալի ազդեցությունը ունեցավ հայ մտավորական կանանց շրջանում: Անդրանիկ այս հանդեսի շնորհիվ արևմտահայ կանայք հնարավորություն ունեցան տպագրվելու և մուտք գործելու գրական միջավայր, իսկ հետագայում՝ հետաքրքրվելու և զբաղվելու այն ամենով, ինչ առաջարկում և առաջադրում էր Էլպիս Կեսարացյանը հանդեսի էջերում: Այսպիսով, 19-րդ դարի 60-ական թվականներին Օսմանյան կայսրությունում (հատկապես՝ խոշոր քաղաքներում) ապրող հայ համայնքում կանանց ազատագրության գաղափարի հիմնադիրը և նախամայրը Էլպիս Կեսարացյանն էր, թեպետ այդ դերակատարությունը որոշ ուսումնասիրողներ վերագրում են հայ անդրանիկ արձակագրուհուն՝ Սրբուհի Տյուսաբին (Սրբուհի Վահանյան), որոշներն էլ՝ բանաստեղծուհի, արձակագիր Սիպիլին (Զապել Խանճյան), ինչը հայ գրականության զարգացման ընթացքի շեղում է:

«Կիթառ»-ի առաջնայնությունը և գաղափարաբովանդակային հիմնահարցերը

Այն, որ «Կիթառ»-ը *կանանց մասին և կանանց համար* հայերեն առաջին պարբերականն է, իսկ Էլպիս Կեսարացյանը՝ *հայ առաջին կին խմբագիրը*, անբեկանելի իրողություն է: Այս առիթով Վիեննայի Միխիթարյան միաբանության հայր Եփրեմ վարդապետ Պողոսյանը իր «Հայ խմբագրուհիներ» գրքում գրում է. «Օրիորդ Էլպիս Կեսարացյանի կ'իյնա պատիվը հիմնադիրն ըլլալու առաջին հայ իգական թերթին: Կեսարացյան՝ 1862 օգոստոս 1-ին Պոլսո մեջ լույս կը հանէ հայ առաջին կնոջական թերթը՝ Կիթառ, որով ինքը կ'ըլլա հայ անդրանիկ խմբագրուհին» [21: 13]: Սակայն գրական-գիտական շրջանակներում առկա են տարակարծություններ:

1987 թվականին տպագրված «Զմյուռնահայ պարբերական մամուլը» [17: 241-242] գրքում կարդում ենք, թե կանանց համար ամսագիր տպագրելու *առաջնայնությունը* պատկանում է ոչ թե Կ. Պոլսին, այլ Զմյուռնիային, որտեղ 1862 թվականի հունվարի 1-ից մինչև հունիսի 15-ը տպագրվել է «Հավերժահարս» [5: 8] խորագրով մի հանդես (12 համար)՝ Սարգիս Փափագյանի և Թ. Ավետիսի խմբագրությամբ: Գրական հետաքննությամբ, սակայն, պարզվել է, որ Էլպիս Կեսարացյանի «Կիթառ» հանդեսը հիմնադրվել է 1861 թվականի մայիսին, «Հավերժահարս» հանդեսի հիմնադրումից երկու ամիս շուտ:

«Հավերժահարս»-ի խմբագիրների կողմից կանանց համար հանդես հիմնադրելու և տպագրելու ցանկությունը առավելապես իրենց տարածք մտած կնոջ հետ մրցելու մարաթոնյան վազք է հիշեցնում, քան թե կանանց համար որակյալ հանդեսի տպագրության փորձ: Մա ակնհայտ երևում է «Հավերժահարս»-ում տպագրված ժամանցային նյութերից:

Կարևոր է ընդգծել նաև գրական-մշակութային միջավայրի նախանձը, չարությունը, խարդավանքները՝ որպես այդ գործընթացը ուղեկցող գործոններ, քանի որ դրանք չափազանց մեծ դեր են ունեցել: Այդ մասին անուղղակիորեն հուշում են «Կիթառ»-ի վերաբերյալ քննադատությունները և անառողջ մրցակցությունը: Ենթադրվում է, որ «Հավերժահարս»-ի խմբագիրները նախօրոք տեղեկացված են եղել «Կիթառ»-ի հիմնադրման և հրատարակության մասին: Այս ենթադրությունը խիստ հավանական է, քանզի արդիության մեջ ևս առկա են այսօրինակ մրցապայքարներ:

«Հավերժահարս»-ը չունեի առանձնացող ուղղվածություն կամ հստակ դիմագիծ. դրա նպատակը և գերխնդիրը կանանց ժամանցն էր, իսկ որ ամենակարևորն է՝ չունեի կանանց ուղղորդող առանձնացված սկզբունքներ, որոնց միջոցով կքննվեին կանանց ազատագրման հիմնախնդիրները: Բնչպես նշեցինք, այն բնույթով ժամանցային էր: Հետևաբար՝ նկատելի է քողարկված այն կամայականությունը, որի արդյունքում հետին պլան էր մղվում «Կիթառ»-ը:

Եթե զուգադրելու լինենք երկու պարբերականների առաջնայնության հարցը, ապա հետևյալ պատկերն է ստացվում. երկու պարբերականներն էլ հիմնադրվել են նույն տարում՝ 1861 թվականին: Սակայն «Կիթառը» հիմնադրվել է «Հավերժահարս»-ից երկու ամիս շուտ՝ 1861 թվականի մայիսին, իսկ «Հավերժահարս»-ը՝ նույն թվականի հուլիսին: «Կիթառ»-ը տպագրվել է «Հավերժահարս»-ից վեց ամիս ուշ՝ 1862 թվականի օգոստոսի 1-ից մինչև 1863 թվականի փետրվարի 15-ը, իսկ «Հավերժահարս»-ը տպագրվել է 1862 թվականի հունվարի 1-ից մինչև հուլիսի 15-ը: «Կիթառ»-ը տպագրվել է ամիսը մեկ անգամ, իսկ «Հավերժահարս»-ը՝ 15 օրը մեկ: Ստացվում է, որ ժամանակային առումով «Հավերժահարս»-ի խմբագիրները հասցրել են 6 ամսով առաջ անցնել Էլպիս Կեսարացյանից: Բայց ընդամենը:

Ընդհանուր առմամբ, տպագրվել են «Կիթառ»-ի 7 և «Հավերժահարս»-ի 12 համարներ: Այն, որ «Կիթառը» լույս է տեսել ընդամենը յոթ ամիս և տպագրվել է միայն յոթ համար, տեղեկանում ենք նաև «Ծաղիկ» հանդեսի մի անդրադարձից. «Հ. Գրիգորիս Գյալէմբեարեան ազնուաբար հաճեցաւ ցոյց տալ ինձ իր Լրագրութեան Պատմութեան ձեռագրին այն մասը, որ կը վերաբերի Կիթառին, եւ ուրկէ կը տեղեկանամ թէ եօթը թիւ միայն հրատարակուած է այդ կնոջական հանդէսը, որ պէտք է դադրած ըլլայ 1863 թվականի առաջին վեց ամիսներուն մէջ» [23: 107]: Հարկ է նշել, որ Կեսարացյանը և հայ մտավորական կանանց այն աստղաբույլը, որ մեկ տասնամյակ անց սկսել էր առավել բուռն հասարակական-քաղաքական և գրական-մշակութային գործունեություն ծավալել, ոգևորված էին

1863 թվականին ընդունված և վավերացված Հայոց Սահմանադրության մեջ արձանագրված 43-րդ հոդվածով [9], որը սահմանում էր կանանց իրավունքները: Այդ ոգևորությունը ավելի ուշ՝ 1870-ական թվականներին, դրսևորվում էր նրանց հոդվածների, էսսեների, վեպերի, կրթադաստիարակչական աշխատանքների, սոցիալ-հասարակական և բարեգործական ընկերությունների գործունեության միջոցով:

Իրենց ազատագրման հիմնախնդիրները և ենթակայական վիճակը փոխելու ձևակերպումները գրավոր տեքստում կանայք կարողացան և սկսեցին իրացնել միայն 1880-90-ական թվականներին, երբ տպագրվեցին առաջին հայ արձակագրուհի Սրբուհի Տյուսաբի հրապարակախոսական անդրանիկ հոդվածները և «Մայտա», «Միրանոյշ», «Արաքսյա կամ Վարժուհին» վեպերը [24]: 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարասկզբին Տյուսաբի երկերին հետևեցին հայ մտավորական մյուս կանանց՝ Սիպիլի (Զապել Խանջյան), Հայկանուշ Մառքի (Թովուզյան), Արշակունիի Թեոդիկի (Ճեզվեճյան), Զարուհի Գալեմբյարյանի, Զապել Եսայանի աշխատանքները:

1860-80-ականներին մտավորական կանայք սկսեցին հիմնադրել բարեգործական ընկերություններ և միություններ, զբաղվել իգական սեռի կրթությամբ և դաստիարակությամբ, սոցիալ-հասարակական գործունեությամբ ու բարեգործություններով: Նրանցից շատերի կենսագրություններում գտնում ենք նաև համաշխարհային գրականության հեղինակներին ընթերցելու և գրադարաններ ունենալու փաստերը, ինչպես Սրբուհի Տյուսաբի պարագայում է: Այս տեղեկությունները, ցավոք, սակավ են Կեսարացյանի դեպքում:

Վերոնշյալ հանգամանքները ուսումնասիրելիս և «Կիթառի» առաջին համարում զետեղված էսսեները՝ «Ընկերութեան օգտակարութիւնը», «Իրաւունքը ի գործ դնելը յանդգնութիւն չէ», ընթերցելիս պատկերացնում ենք նաև տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-հասարակական կյանքում կանանց իրավունքները հաստատելու անհնարինության աստիճանը: Այս հանգամանքներն էլ վկայում են, որ հանդեսի հիմնադրման ու տպագրության արդյունքում հայ առաջին խմբագրուհին բազմաթիվ թշնամիներ է ձեռք բերել:

Սկսենք փոքր-ինչ վերջից: 1864 թվականին «Կիթառ»-ի փակվելուց և գրական-մշակութային տիրույթից Կեսարացյանի հեռանալուց հետո նույնիսկ նրա հակառակորդները չեն դադարել քննադատել նրան:

Այսպես, 1864 թվականին Փարիզում տպագրվող «Արեւմուտք» թերթում Ստեփան Ոսկանյանը (Ոսկան) իր մի հոդվածում ուղղորդում է Կեսարացյանին թողնել խմբագրի պաշտոնը և զբաղվել կնոջը հատուկ աշխատանքներով՝ կար ու կարկատան անել, իլիկ մանել, ասեղ թելել. «Եաշմախլը Հայկունի ուրեմն կարկտուքը կը մոռնայ, կտաւը կը ծալլէ, ասեղը կը թողու, թելը կը կծկէ եւ թուղթի թերթեր կը ծաւալէ իր առջեւ, սւան կը թափէ եւ գրիչ ձեռք կ'առնու, մատնոցը կը սկրթէ կը հանէ եւ զրահւելով կը նետուի աշխարհիս ամենէն վրդովալի եւ փշոտ դաշտին մէջ, անտարակոյս ուրիշ հայկունիներ պաշտպա-

նելու համար: Ի՞նչ կը դառնայ արդեօք Պօլսի մէջ որ Հայկի աղջիկ մը ոտքի կ'ելնէ եւ կը գրահուի այսպէս: Միթէ՞ Բելը յարութիւն առեր է...» [1: 10-13]:

Կեսարացցանի գրական-մշակութային գործունեությունը ուսումնասիրելով՝ եզրահանգում ենք, թէ գրագիտուհին վերահսկվում և գրաքննվում էր սուլթանական կառավարության՝ Բ դռան կողմից: Միևնույն ժամանակ, գրական-մշակութային տիրույթում նրա վրա ընդհանրապես տարածվում էր տղամարդկանց նախանձը և խանդը՝ մտքի և գործի ինքնուրույնություն ունենալու տեսանկյունից: Հետևաբար՝ «Կիթառ»-ի տպագրության պարագայում քննադատություններն և պատճառ կարող էին դառնալ հատկապես այսօրինակ գործոնները:

Նույն հոդվածում Ստեփան Ոսկանը անդրադառնում է նաև Կեսարացցանի կեղծանվանը. «...Ստոյգ է որ այս օրիորդը արիութիւն ունի, Հայկուհի մ' է, ինչպէս ինք կ'ստորագրէ հրատարակած թերթին ներքեւ, իր առջեւ երկու երեք տառեր դնելով բարակ եաշմախի պէս, որպէս զի իր ո՛վ ըլլալը չը յայտնուի...» [1]: Այս անդրադառնում է «Կիթառ»-ի հրատարակությանը. «Օրիորդի գիրգ մատներու չը վայլէր Հայկին աղեղը Կիթառ աղիք ընել եւ զայն պրկելով ազգային սէր երգել... ազգայինք շատ կը սխալին երբ մանրմունք թերթերու բազմութիւնը լուսաւորութեան աւետիք կը քարոզեն: Ընդհակառակը իմաստակութեան փթթելու նշան է այսպիսի խումբերու երեւոյթը, որոնց մէջ ամէն բանէ առաջ տաղանդը կը պակսի... ուստի իր (Հայկուհիի) ձեռքն է փոքր աշխատութիւնով ո՛չ միայն գլուխը սուտ զարդերէ պրծնել եւ իր տեսիլները յօտել, այլ եւ իր սեռին շնորհքը առնուլ եւ հրապարակը թողուլ բոլորովին...» [1]:

Ստեփան Ոսկանի հետադիմական այս քննադատությունը չի ընդունվում գրական լայն շրջանակների կողմից, և նա բազմաթիվ դիտողություններ է ստանում սույն անդրադարձի առիթով, որից հետո, «Արեւմուտք»-ի նույն թվականի երրորդ համարում գրում է. «Կը լսենք թէ Կիթառի վրայ գրածնիս ծուռ մեկնություն կը գտնէ մը Հայերու քով եւ Արեւմուտքը կը բամբասի... օրիորդներու կրթութեան թշնամի չենք... մեզի համար կրթութիւնը, մանաւանդ օրիորդի կրթութիւնը, արտաքին զարդ չէ, ավելի միտքի եւ սիրտի կը վերաբերուի քան թէ մորթի, եւ կրթուելու ատեն ազգային ամեն յատկութիւններէ սկրթուելու չենք անոնց տեղ օտարին կեղտը ընտրելով... փոխ առնունք Եւրոպայէն լոյս եւ ոչ սնգոյր» [1: 17]: Որքան էլ գրական շրջանակներում քննադատեին Ստեփան Ոսկանի տպագրած հոդվածը և դիրքորոշումը, այնուամենայնիվ ակնհայտ էր հայրիշխանական օրենքներով ապրող հասարակության մտածելակերպը. քննադատելով Կեսարացցանի խմբագրական գործունեությունը, տղամարդիկ հաստատում էին իրենց *առաջնայնությունը*:

Ստեփան Ոսկանի այս անդրադարձը իրապես խտրական վերաբերմունքի դրսևորում է և խորքում կրում է հանդեսի փակման հիմնական նախապայմաններից առնվազն երկուսը՝ հովանավոր չունենալը և քաջալերանքի չարժանանալը. «Անշուշտ դադարումի բուն պատճառն եղած է հարկ եղած բաժանորդներու եւ ընթերցողներու անբաւական թիւը» [22: 19]:

Ըստ ամենայնի, նշյալ երկու հանգամանքները փոխկապակցված էին. դրամական միջոցների անբավարարության հետևանքով փակվելուն նպաստել են սուլթանական գրաքննությունը և այդ քաղաքականության ազդեցությունը կրող հետամնաց, չարական ու նախանձ հասարակությունը, որը հետևում էր այն համընդհանուր կարծիքին, թե կինը չի կարող տղամարդու գործով զբաղվել: Նախապաշարումներով ու բամբասանքի ուժով կառավարվող այդ հասարակությունն է լռելյայն մերժել «Կիթառ» և չգնելով այն՝ խմբագրին կանգնեցրել դրամական անլուծելի խնդիրների առջև, իսկ հանդեսը դատապարտել է ստույգ մահվան: Այս տեսակետի հավաստումը կարող են լինել Էլպիս Կեսարացյանի օտարումը հասարակությունից և գրական ասպարեզից (շուրջ 15 տարի):

Անընդունելի է նաև փաստը, որ հետագայում նույնպես անդրադարձ չի կատարվել առաջին հայ կին խմբագրի էսսեներին, նրա «Նամականի առ ընթերցասեր հայուհիս» ժողովածուին և կանանց առաջին պարբերականին՝ «Կիթառ»-ին: Ի հակադրություն վերոնշյալ հանգամանքների՝ եղել են նաև «Կիթառ»-ի հրատարակությունը ողջունողներ: Դրան անդրադարձել է ազատական հայացքներով հայտնի «Մասիս» շաբաթաթերթը. «Կիթառ, Հանդես Ամսօրեայ, Հրաւեր հայկազն օրիորդաց»՝ Այս անունով պարբերական թերթի առաջին թիւը տեսանք անցեալ շաբթու հրատարակուած Ե.Կ.Տ. Հայկուհի ստորագրութեամբ» [6: 3]:

«Կիթառի»-ի փակման հանգամանքին «Մասիս» շաբաթաթերթը անդրադարձել է նաև մեկ այլ հոդվածում. «Ո՞ր մնաց Հայուհւոյ մը հրատարակած Կիթառ անունով թերթը, որ 1860 թուականին (պետք է ըլլար՝ 1862) քանի մը օրուան համար երեւան ելաւ Բոսփորի եզերքը, բայց կենսական ծովուն ալեաց մէջ եւ ո՛չ մէկն անոր ձեռք երկնցնելով, գնաց անհետացաւ, տխուր յիշատակ մը թողլով մեզ» [6]:

1911 թվականին տպագրված «Ամենոյն Տարեցոյցը» տարեգրքում Թեոդիկր գրում է. «Շուրջ կէս դար առաջ (1863 թ.) հրատարակած է Պօլիս պարբերագիր մը Կիթառ անուն: <...> Մ. Տատեան 1867 թվականին Revue des deux mondes-ի [27: 903-928] մէջ Հայ կեանքի վրայ ուսումնասիրութեան մը առթիւ յիշած է Պօլսահայ Ա. Գրագիտուհւոյն այդ հրատարակութիւնն՝ իբր յայտարար Հայ կնոջ մտաւոր զարթնումին: Օր. Կեսարացեան Հայ լեզուն մշակած է Մխիթ. ճոխ ու հիւթեղ մատենագիտութեան վերծանութեամբ և առաջնորդութեամբ իր ազգական Անդրեաս Տէր-Անդրէասեան բանասէր Եպիսկոպոսին որ ապա կոչուած է յէջմիածին և հովուական այնքան բեղմնաւոր պաշտօնավարութիւն ունեցած ի Կովկաս (կառուցանող Մ. Մեսրոպի դամբարանին յՕշական): - Թրքահայ գրագիտուհեաց այս երիցուհին իր արձակ և յանգաւոր արտագրութիւններն ամփոփած եւ հրատարակած է Նամականի առ ընթերցասեր Հայուհիս տիտղոսով հատորի մը մէջ, Կ. Պարոնեան տպ. 1879 թ., հասոյթը յատկացունելով «Ազգանուէր Հայուհեաց Ընկ.եան» [12: 267-268]:

«Կիթառ»-ի տպագրությանը անդրադարձել է նաև Կ. Պոլսում հայտնի «Մեղու» պարբերաթերթը. «Կիթառ, Հանդես Ամսօրեայ, Հրատեր հայկազն օրիորդաց». «Այս անունով պարբերական թերթ մը Օգոստոս սկիզբէն հրատարակուելու համար առաջին թիւը տեսնուեցաւ: Թերթին խմբագիրը Ե.Կ.Տ. Հայկուհի օրիորդ մ'է, որ գեղեցիկ սեռին դաստիարակութեանը Ազգային համեստ սիրոյ, կրթութեան և ազգասիրութեան վրայոք գրելով մասնաւորաբար ընտանիքներու ուղղեալ է: Իր այս նպատակներուն վսեմութիւնը նայելով յոյս ունիմք որ այս դժուար պաշտօնին մէջ ամենայն յաջողակութեամբ պիտի պսակուի, եթէ բարեսէր Հասարակութիւնը և ընթերցասէր տիկնայք և օրիորդք իրենց սեռին այս անդրանիկ խմբագրուհին բարեհաճին պատուել իրենց բաժանորդագրութեամբը, քանզի այսպիսի վիճակի մը մէջ հասարակաց հանգանակի օգնութիւնը ամենակարեւոր է յարատեւ շարունակութեան» [28: 165-166]:

«Մեղու»-ի խմբագիրը նաև խորհուրդ է տվել Կեսարացյանին. «Դիտողութիւն մը ունիմք ԿԻԹԱՌԻ համեստուհի խմբագրուհւոյն՝ այս է, որ ճգնի ընտանեկան դաստիարակութեան եւ մայրերու պարտաւորութեանց վրայ կրցածին եւ գիտցածին չափ յաճախ գրել, կարճ գրել, եւ միանգամայն ալ Ազգին մանաւանդ իգական սեռին հասկընալի կերպովը այսինքն պարզ գրել» [28]:

«Մեղու» պարբերաթերթի գրախոսականում խմբագրի կողմից էլպիս Կեսարացյանին տրված խորհրդի անդրադարձը գտնում ենք 1862 թվականի «Մասիս» պարբերականի թիվ 582-ում. «Յետադէ մ, բայց ոչ, այսուհետեւ ամենքս ալ յառաջադէմ պիտի ըլլանք, ամենքս ալ հայրենեաց նուիրական հուրովս վառեալ, ուխտենք անոր բարօրութիւնը հայթայթել, սթափինք այն մահահամբոյր թմրութենէն, քանզի մեր նախնեաց վեհանձն ոգիները երկինքէն մեր վրայ յառեալ կը նային, պէ՛տք է արդեօք որ այնչափ արիագունդ դիւցազն արժան եւ գծուծ զաւակներն ըլլանք: Հեռաւոր եւ մերձաւոր Հայկազունքս իրարու ձեռն միաբանութեան կարկառենք, յառաջադիմութիւնն ու միաբանութիւնը մեզի համար կենաց եւ մահու խնդիրներ են, եւ իրարու վրայ ամենայն զոհեր ընելու պատրաստ ըլլանք՝ քանզի «Եւ ո՞վ ոչ թռչիցի յեղբօր որեան սէր կամ ՚ի վրէժ» (Հայկ Դրուագ Է): <...> Մեղուն այս անգամ մեղրաբեր ծաղկանց հիւրերով իր խայթոցին վերքը մեղմացուցեր է, եւ հասկնալով որ խիստ է հին եւ նոր փիլիսոփայից լեզնետներով այնչափ քնքուշ սրտերու դէմ Փիլիպպեան պատերազմ հրատարակել, հաշտութեան ձիթենեաւ ներկայացեր է» [20: 2-3]:

Զմյուռնիայում տպագրվող «Ծաղիկ» հանդեսի խմբագիր Գրիգոր Չիլինկիրյանը [2: 26-28] հանդեսի 43-րդ համարում, անդրադառնալով «Կիթառ»-ին և նրա խմբագրուհուն, գրում է. «Մոտերս ուրիշ դրօշ մ'ալ, Կիթառ անուամբ, սկսաւ ծածանիլ Հայ գրական ասպարեզին մէջ: Դրօշակակիրն է Արմէնուհի մը. Օրիորդ Ե.Կ.Տ. Հայկուհի: Այս գրական հանդեսին առաջին թիւը արդէն ընդունելու եւ անոր ներդաշնակային քաղցրութիւնը վայելելու բարեբաղդութիւնը ունեցած ենք: Հին գլուխներու համար գուցէ յանդգնութիւն համարուի Օրիորդի մը գրական կրկէսը նետուիլը. բայց ինչպէս կ'ըսէ նոյն ինքն մեր պաշ-

տօնակից Հայկազն Օրիորդը, եթե խորհիլը եւ հրապարակաւ խօսիլը «իրաւունք է, զայն ի գործ դնելը յանդգնութիւն չէ»: Ոչ միայն յանդգնութիւն չէ, այլ նաեւ անհրաժեշտ պարտաւորութիւն [15: 46]: Ամերիկայի մէջ տպուած Օնգելը Թօմ անուն աշխատասիրութեան հեղինակուհին կին մ' է, եւ իւր գիրքը ազատութեան աւետարանը կը սեպուի: Տրանսայի եւ Անգլիայի մէջ նոյնպէս նշանաւոր են բազմաթիւ կիներ իրենց գրական հրաշակերտներովը: Այն որ ներելի է ուրիշ ազգերու մէջ, մեր մէջ չկրնար աններելի ըլլալ: Ուստի յարատեւութիւն, արիւթիւն եւ յաջողութիւն կը բարեմաղթենք այս նորահաստատ թերթին. մանաւանդ թէ կը փափաքինք որ Ազնիւ հեղինակուհիին մատերը մի եւ նոյն քնքշութեամբ Կիթառին թելերը շարժեն՝ ասոր ներկայ ներդաշնակութիւնը չայլայլելով շարունակութեան մէջ» [2: 8]:

Չնայած աջակցության այս խոսքերին՝ «Կիթառը» փակվեց յոթ ամիս հետո:

Պետք է խոստովանել, որ «Կիթառ» հանդէսի վերաբերյալ մեզ հասած տեղեկությունները նույնպէս քիչ են: Այս դեպքերից հետո Էլպիս Կեսարացյանը իր հրապարակախոսական հոդվածներով շարունակել է աշխատակցել պոլսահայ մամուլին, հատկապէս՝ «Մասիս» պարբերականին:

Ավելի ուշ՝ 1879 թվականին, նա հրատարակել է «Նամականի առ ընթերցասէր հայուհիս» գրքույկը, որում տեղ են գտել հեղինակի բարոյախրատական, էթիկական, գեղագիտական և մանկավարժական բնույթի կրթադաստիարակչական հոդվածները, բանաստեղծությունները, նամակները: Այդ մասին վկայում է Թեոդիկը. «Մերթ աշխատակցած է Ազգ. Թերթերու եւ մասնաւորապէս կը յիշուի Իւթիւճեանի Մասիս օրաթերթին մէջ իր նկարագեղ մէկ յօդուածն «Երջանիկ ժանտախտ» որ սուր և հեզնոտ ակնարկութիւն մըն է Հայկական պարահանդէսներուն» [12: 268]:

Ժառանգությունը

Ինչպէս Էլպիս Կեսարացյանի կյանքի և գրական գործունեության մեծ մասը, այդպէս էլ նրա կյանքի վերջին տարիները հիմնականում փաստված չեն: «Կիթառի» արխիւի վերաբերյալ ամկա են հակասական և սուղ տեղեկություններ. հնարավոր է նաև, որ այն բռնագրավվել և ոչնչացվել է սուլթանական բռնապետական քաղաքականության արդյունքում: «Կիթառ»-ի շուրջ եղած տարակարծությունների շարքում ուշագրավ է նաև Գարեգին Լևոնյանի անդրադարձը. «Վաթսունական թուականին Կոստանդնուպոլսի հայ լրագրութեան լեզեռնի մէջ ուշադրութեան արժանի է Կիթառ ամսօրեայ հանդէսը, որի տնօրէն-խմբագրուհին էր Ե. Հայկուհի: Այս *առաջին եւ վերջին* օրինակն է մեր պարբերական մամուլի պատմութեան մէջ որ մի հայ կին ձեռնամուխ է լինում մի հանդէսի խմբագրական պատասխանատու գործին: <...> Մենք այժմ աւելի շատ զարգացած տիկնայք եւ օրիորդներ ունենք, բայց նորանցից եւ ոչ մինի մտքիցն է անցնում մի այսպիսի գործի ձեռնարկութիւն»: [13: 238] Հանուն արդարության պետք է նշել, որ մինչև 1895 թվականը Գարեգին Լևոնյանի «Հայոց

պարբերական մամուլը» գրքի տպագրությունը հայ իրականության մեջ արդեն եղել են առնվազն երկու հայ կին խմբագրուհիներ՝ Սրբուհի Ա. Երիցյանց, «Տոմար Ընտանեկան» (Թիֆլիս, 1874), Սուփիա Մսերեանց, «Փարոս Հայաստանի» (Մոսկվա, 1879), ուստի այսօրինակ եզրահանգում կատարելով՝ մատենագետը պետք է կա՛մ անտեղյակ լիներ գրական-մշակութային տեղաշարժերից, կա՛մ առնվազն չցանկանար նշել անուններ, ինչը քիչ հավանական է: Սրբուհի Ա. Երիցյանցի «Տոմար Ընտանեկանը» թեև տպագրվել է Թիֆլիսում, սակայն հանդեսի տպաքանակը սպառվել է Կոստանդնուպոլսում:

Երկար տարիների լույսնորոգ հետո, 1963 թվականին, երբ խորհրդային *հրկաթե վարագույրը* քիչ թե շատ բացվել էր (1953-1963), գրադարանավարուհի Լուսիկ Գրիգորյանը «Կիթաո»-ի 100-ամյակի առիթով փոքրիկ անդրադարձ՝ է կատարում Էլլիս Կեսարացյանի գործունեությանը և «Կիթաո» հանդեսին՝ որպես հայ կանանց առաջին պարբերականի:

Իսկ նրանից առաջ, 1953 թվականին Էլլիս Կեսարացյանի կենսագրության՝ ոչնչացումից փրկված պատառիկներին անդրադարձել է միայն Վիեննայի Մխիթարյան միաբանության հայր Եփրեմ վարդապետ Պողոսյանը «Հայ խմբագրուհիներ» և «Պատմութիւն հայ Մշակութային ընկերութիւններու» [21 և 22] աշխատություններում: Այս հանգամանքների շղթայական զարգացման մեջ նույնիսկ զարմանալի չէ, որ անտեսվել են հայ առաջին խմբագրուհու գոյության փաստը և նրա խմբագրած ու հրատարակած «Կիթաո» հանդեսը: Զարմանալի չէ, սակայն ցավալի է:

Հարկ է նշել, որ Էլլիս Կեսարացյանին և «Կիթաո» հանդեսին նվիրված այս ուսումնասիրությունը զգալի ներդրում է նաև հետխորհրդային Հայաստանում կեղծ գաղափարախոսությունների մերժման, ժողովրդավարության զարգացման, ժողովրդի բարեկեցության ապահովման, ինչպես նաև կանանց իրավունքների առաջխաղացման համատեքստում: Հետզադուրային և հիփրիդային (փակ և բաց (խառը) սոցիալական համակարգեր) այնպիսի հասարակություններում, ինչպիսին առկա է Հայաստանի Հանրապետությունում, սոցիալական սուբյեկտը բախվում է ինքնորոշման և կայացման բարդ մարտահրավերների:

Եզրակացություն

Այս ուսումնասիրությունը ուշադրության կենտրոնում է պահում 19-րդ դարի երկրորդ կեսի առաջին հայ կին խմբագիր, լրագրող, գրող և ֆեմինիզմի նախամայրերից մեկի գրական եզակի ներդրումը և տարբեր դերերը: Քննում է այն պայմանները, որոնց ներքո Կեսարացյանը զբաղվել է գրական, մշակութային և հասարակական գործունեությամբ, և այն մարտահրավերները, որոնց նա հանդիպել է այդ գործունեությունն իրականացնելիս: Բացի այդ, մենք փորձեցինք

* Տե՛ս «Հայ կանանց առաջին պարբերականը» խորագրով փոքրիկ հոդվածը («Զարթոնք» (3 փետրվարի, էջ 3), որը նույնությամբ վերահրատարակվել է նաև Սոֆիայի «Երևան» (1963, թիվ 2, էջ 11) և Երևանի «Սովետական գրականություն» (1963, թիվ 3, էջ 151) ամսագրերում:

լույս սփռել, թե ինչու են Էլպիս Կեսարացյանը և «Կիթառ» հանդեսը հետին պլան մղվել կամ, այլ կերպ ասած, անտեսվել ավելի քան 162 տարի: Ելնելով Կեսարացյանի՝ որպես կին-ֆեմինիստի, նշանակության փաստից՝ հետազայում կրնենք նաև Կեսարացյանի նվաճումների հետ կապված այլ հարցեր, որոնք դուրս են ներկա ուսումնասիրության շրջանակներից:

НАИРА АМБАРЦУМЯН – *Элпис Кесарациян и журнал «Китар».* – Данная статья является своеобразным литературоведческим исследованием, в рамках которого был дан ответ на ряд заслуживающих внимание вопросов: какова была миссия первой армянки-редактора, журналиста, писателя-публициста Элпис Кесарациян (1830-1913), жившей и творившей во второй половине XIX века, в каких условиях развивалась ее литературно-культурная и социально-общественная деятельность, с какими вызовами она столкнулась в этот период?

С помощью исследовательского, биографического, сравнительного и других методов анализа выявлено множество функций, осуществленных Элпис Кесарациян в качестве женщины-редактора, женщины-публициста, женщины-издателя, женщины-переводчика, женщины-учителя, находясь при этом под гнетом Османской империи и в условиях цензуры. Изучение деятельности и творчества Элпис Кесарациян подтверждает, что, занимаясь защитой прав и свобод женщин в тоталитарном обществе, поднимая важнейшие вопросы национального образования и воспитания, своей конечной целью автор считала совершенствование социума.

Исследование было проведено с учетом геополитического и исторического контекста Константинополя второй половины XIX века, существования имперской цензуры, а также критических замечаний в адрес журнала «Китар» («Кифара»), редактируемого Э. Кесарациян. В статье подчеркнута несокрушимая воля, которой руководствовалась на протяжении всей своей жизни прогрессивная женщина как представительница христианского национального меньшинства.

Ключевые слова: *Элпис Кесарациян, «Китар», первая армянка-редактор, Османская империя, XIX век.*

NAIRA HAMBARDZUMYAN – *Elpis Kesaratsian and the Journal “Guitar”.* – This article focuses on Elpis Kesaratsian (1830-1913), the first Armenian female editor who founded and published the journal “Guitar” (1861-63) but has been neglected in the field of Armenian history and culture studies for more than 162 years.

This study sheds light on the geopolitical and historical contexts in Constantinople in the second half of the 19th century, the imperial censorship, the criticism with regard to the journal “Guitar”, the unbreakable will that the first Armenian female editor, who also acted as writer, publicist, journalist, translator, Elpis Kesaratsian was guided by throughout her life as a representative of a Christian national minority living in the 19th century Ottoman Empire.

The many roles of Elpis Kesaratsian, including those of woman-editor, woman-publicist, woman-publisher, woman-book author, woman-translator, woman-lead nurse, woman-teacher that she fulfilled under the oppression and censorship of the Ottoman Empire, were revealed through investigative, biographical and comparative analyses. Our findings revealed that Elpis Kesaratsian’s main goal was the *improvement of the society*.

Key words: *Elpis Kesaratsian, “Guitar”, first Armenian female editor, Ottoman Empire, 19th century.*

Գրականության ցանկ

1. «Արեւմուտք», Բարիզ, 1864, թիւ 2, 3
2. «Ծաղիկ», Չմյուռնիա, 1861, թիւ 15, 1863, թիւ 65, թիւ 66
3. «Ծաղիկ», 1906, Կ. Պոլիս, էջ 390-391
4. «Կիթառ» (հանդէս ամսօրեայ), Կ. Պոլիս, տպ. Ռ. Յ. Քիրքճեան, 1862-1863
5. «Հավերժահարս», Հանդէս կիսամսեայ, Չմյուռնիա, տպ. Տէտեան, 1862
6. «Մասիս», Կ. Պոլիս, 1862, թիւ 547
7. «Վարդ», Կ. Պոլիս, 1862, թիւ 4
8. Ազգային Սահմանադրութիւն Հայոց, 1860, Կ. Պոլիս, Ստամպոլ
9. Ազգային Սահմանադրութիւն Հայոց, 1863, Կ. Պոլիս, Ստամպոլ
10. **Բարսեղյան Հ.**, Աշխարհագրական անունների հայերեն տառադարձության մասին որոշումը, Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Եր., «9-րդ հրաշալիք», 2006, էջ 55 (364)
11. **Գյալմբեարեան Գ.**, Պատմութիւն հայ լրագրութեան, հ. Ա, Վիեննա, Մխիթարեան տպ., 1893
12. **Թեղիկ**, Ամենոյն Տարեցոյցը, Կ. Պոլիս, 1911
13. **Լեւոնեան Գ.**, Հայոց Պարբերական Մամուլը, Աղեքսանդրապոլ, 1895
14. **Խառատյան Ա.**, Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857-1908 թթ.), ՀԽՍՀ ԳԱ պատմ. ին-տ, Եր., ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1989
15. **Կարինյան Ա. Բ.**, Արևմտահայ լուսավորիչները 1860-1870-ական թթ., «Տեղեկագիր», Եր., 1944
16. **Կեսարացեան Ե.**, Նամականի առ ընթերցասեր հայուհիս, Կ. Պոլիս, տպ. Կ. Պարոնեան, 1879
17. **Հակոբյան Մ.**, Չմյուռնահայ պարբերական մամուլը (1861-1880), Եր., 1987
18. **Համբարձումյան Ն.**, Կ. Պոլսի հայոց բարեգործական ընկերությունների և վարժարանների դերակատարությունը կանանց ազատագրության գործընթացներում 19-րդ դարի երկրորդ կեսին, «Գիտական Արցախ», թիւ 4(11), 2021
19. **Համբարձումյան Ն.**, Մշակութային, բարեգործական և պարզասիրաց ընկերությունների և միությունների դերակատարությունը կանանց ազատագրության գործընթացներում 19-րդ դարի երկրորդ կեսի Կ. Պոլսում, «Գիտական Արցախ», թիւ 1(44), ԵՊՀ հրատ., 2022
20. **Պառնասեան Վ. Պ.**, Ուսումնական եւ գրագիտական տրամախօսութիւնք (Մեղուն եւ գեղեցիկ սեռը: - Իշխանուհին Ալեքսանտրա: - Մ. Աքսիա: - Մ. Օքթալ Ֆեօլէ: Միբիլլա: Կիթառ: - Յորդոր ազգային յառաջադիմութեան), «Մասիս», Կ. Պոլիս, 1862, թիւ 582
21. **Պողոսեան Խ.Ե.վ.**, Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու, հ. Ա-Գ, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1957, 1963, 1967
22. **Պողոսյան Հ.Ե.վ.**, Հայ խմբագրուհիներ, Վիեննա, Մխիթարեան տպ., 1953
23. **Ստեփանյան Գ.**, «Կենսագրական բառարան» (Հայ մշակույթի գործիչներ), հ. Բ (ԺՄՍԷ), Եր., «Սովետական գրող» հրատ., 1981
24. **Տյուսաք Ս.**, Երկեր, Եր., «Սովետական գրող» հրատ., 1981
25. **Fionnuala Dillane**, What is a Periodical Editor? Types, Models, Characters, and Women, *Journal of European Periodical Studies*, 6.1 (Summer 2021)
26. **Marie Nedregotten Sørbo**, Fourfold Female: Birgithe Kühle's Pioneer Norwegian Journal Provincial-Lecture (1794) and Her European Book Collection, *Journal of European Periodical Studies*, 6.1 (Summer (2021))
27. **Mek.-B. Dadian**, La Société arménienne contemporaine, les Arméniens de l'Empire Ottoman, *Revue des Deux Mondes*, 2^e periode, tome 69, (1867)
28. «Մեղուն», Կ. Պոլիս (Ի Ղալաթա), 1862
29. *Victorian Periodicals Review* 48.3 (Fall 2015). The special issue, "A Return to Theory"